ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌԻ՝ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ ԴՎԻՆ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

ԱՐՍԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց հետո (301 թ.) հայոց առաջին եպիսկոպոսապետ-կաթողիկոս Գրիգոր Ա Լուսավորչի[1] (302–325) գլխավորությամբ հայրապետական աթոռը հաստատվում է Վաղարշապատում:

Հայոց Արշակունյաց թագավորության անկումից հետո (428 թ.) Արևելյան Հայաստանն ընկնում է Սասանյան Պարսկաստանի գերիշխանության տակ, վերածվում պարսկական նահանգի՝ մարզպանության՝ Արտաշատ կենտրոնով: Պետականության բացակայության պայմաններում, արդեն իսկ V դ. կեսերին, Հայաստանի պարսկական մասում ստեղծվել էր անբարենպաստ իրավիճակ՝ պայմանավորված հիմնականում Հազկերտ II (438–457) արքայի՝ Արևելյան Հայաստանի ներքին ինքնուրույնությունը վերացնելու, հայերին կրոնափոխ անելու և ձուլելու քաղաքականությամբ: Հիշյալ ժամանակաշրջանում հայ եկեղեցին ձեռնամուխ է լինում ժողովրդին համախմբելու և եկեղեցու ինքնուրույնությունը պահպանելու դժվարին գործին: Այդ շրջանում հայոց կաթողիկոսությունը « … հանձն է առել ազգային գերագույն իշխանությունն իրականացնելու առաքելությունը, պետականության բացակայության պայմաններում դարձել հայ նախարարություններին միավորող կենտրոն… գլխավորել է V դարի ազգային-ազատագրական զինված պայքարը պարսկական տիրապետության դեմ՝ հանձինս Հովսեփ Ա Հողոցմեցի, Գյուտ Ա Արահեզացի և Հովհաննես Ա Մանդակունի հայրապետների»[2]:

Նկատի առնելով այն, որ Դվին քաղաքը դարձել էր երկրի վարչատնտեսական, մշակութային կենտրոնը, որտեղ մեծ զարգացում էին ապրում արհեստներն ու առևտուրը, և այն, որ Ս. Էջմիածնի Մայր տաճարը գտնվում էր խարխլված ու անմխիթար վիճակում, որոշվում է այնտեղ տեղափոխել նաև հայոց հոգևոր կենտրոնը՝ կաթողիկոսարանը: Այսպես՝ 460–470-ական թվականներին Գյուտ Ա Արահեզացի (Ոթմսեցի) (461–478) կաթողիկոսի օրոք հայրապետական աթոռը Վաղարշապատից տեղափոխվում է Դվին[3]: 481 թ. «տանուտէր Հայոց» Սահակ Բագրատունին Դվինը պաշտո-

---

[1] *Լուսավորչի գահակալման արարողությունը տեղի է ունեցել Աշտիշատում, քանի որ այնտեղ գոյություն է ունեցել մի հին եպիսկոպոսական աթոռ: Կապադովկիայի Կեսարիա քաղաքում, Ղևոնդ եպիսկոպոսի կողմից ձեռնադրվելով Հայաստանի եպիսկոպոսապետ, Լուսավորիչն ուղևորվել է Աշտիշատ, որտեղ էլ կատարվել է արարողությունը (տե՛ս Ամենայն Հայոց կաթողիկոսներ. հանրագիտարան, Ս. Էջմիածին, 2008, էջ 49):*

[2] *«Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002, էջ 460:*

[3] *Հայ ժողովրդի պատմություն, հ. II, Երևան, 1984, էջ 152: Մեր ատենախոսական աշխատանքում, հիմնվելով Մ. Օրմանյանի տեղեկությունների վրա, հավանական ենք համարել, որ հայրապետական աթոռը Վաղարշապատից Դվին է փոխադրվել Հովհաննես Ա Մանդակունու (478–490) օրոք [տե՛ս Ա. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Վաղարշապատի վանքերը (պատ-*

նապես հայտարարում է մարզպանական Հայաստանի մայրաքաղաք[4]. ընդունված էր, որ հայրապետական աթոռն ու պետական իշխանությունը պետք է համատեղ գտնվեին մայրաքաղաքում:

Հայրապետական աթոռի՝ Վաղարշապատից Դվին տեղափոխման ժամանակաշրջանի վերաբերյալ հայագիտության մեջ առկա են իրարամերժ կարծիքներ և ցայսօր չի ձևավորվել մեկ միասնական մոտեցում խնդրո առարկայի վերաբերյալ: Բանն այն է, որ V դ. պատմական իրադարձությունների արդյունքում հայրապետական աթոռի՝ Վաղարշապատից Դվին փոխադրումը պատմագիրներն ու ուսումնասիրողները վերագրում են Մելիտե Ա Մանազկերտցի (452–456), Գյուտ Ա Արահեզացի (461–478), նաև Հովհաննես Ա Մանդակունի (478–490) կաթողիկոսների գահակալման ժամանակաշրջաններին, ինչը հայագիտության մեջ հակասական տեսակետների տեղիք է տվել:

Այսպես՝ Մ. Չամչյանցը կաթողիկոսարանի տեղափոխումը կապում է Հովսեփ Ա Հողոցմեցի (440–452) կաթողիկոսի հաջորդ Մանազկերտի եպիսկոպոս Մելիտեին՝ 452 թ. կաթողիկոս ընտրելու հետ, երբ « … հաւանութեամբ ամենեցուն փոխեցին և հաստ[ատ]եցին զաթոռ կաթուղիկոսութեան անդ ի Դւին, յամի տեառն 452»[5]: Համանման կարծիքի է նաև Հուսիկ արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյանը: 1904 թ. «Արարատ» ամսագրում տպագրած «Հայրապետական աթոռի մասին համառօտ տեսութիւն» հոդվածում նա աթոռի՝ Դվին տեղափոխումը կապում է Վարդանանց պատերազմի հետ, որի ժամանակ Վաղարշապատը «… ավերածության ենթարկվեց, իսկ Կաթողիկեն և հայրապետանոցը քայքայման վիճակի հասան»[6]: Նման պայմաններում հայրապետներն այլևս չէին կարող այդ ավերակներում բնակվել, ուստի «… պատերազմից անմիջապես հետո, 453 թվին գումարված Դվինի Ա. ժողովում նահատակ Հովսեփ Վայոցձորեցու տեղ կաթողիկոս ընտրվեց Մելիտե Մանազկերտցին, և Հայրապետական աթոռը որոշվեց տեղափոխել Դվին: 303–452 թվականը, ուղիղ 150 տարի Հայրապետական աթոռը Վաղարշապատի Կաթողիկեում հարատևելուց հետո առաջին անգամ պաշտոնական տեղափոխության ենթարկվեց և աստանդական մնաց մինչև 1441 թվականը…»[7]:

Կ. Ղաֆադարյանը, հակադրվելով հիշյալ տեսակետներին (նա հղում է միայն Մ. Չամչյանցին), նշում է, որ Մելիտեի օրոք աթոռը Դվին փոխադրելը լոկ ենթադրություն է, քանզի դեպքերի ժամանակակից Ղազար

մավիմագրագիտական ուսումնասիրություն).– Պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2013, էջ 18, 180]: Սակայն, խնդրի առավել խոր ուսումնասիրությունը թույլ է տալիս ենթադրել, որ աթոռը Դվին է տեղափոխվել դեռևս Գյուտ Արահեզացու կաթողիկոսության սկզբնական շրջանում, ինչը հավաստող մատենագրական ու հնագիտական բազմաթիվ փաստեր կան:

[4] *Հայ ժողովրդի պատմություն, հ. II, էջ 152:*

[5] *Մ. Չ ա մ չ յ ա ն ց. Հայոց պատմություն, հ. Բ, Երևան, 1984, էջ 85:*

[6] *Հ ո ւ ս ի կ ա ր ք ե պ ի ս կ ո պ ո ս Տ ե ր - Մ ո վ ս ի ս յ ա ն. Երկերի ժողովածու, Ս. Էջմիածին, 2009, էջ 187:*

[7] *Նույն տեղում, էջ 187–188:*

Փարպեցին ոչինչ չի հաղորդում հիշյալ իրադարձության վերաբերյալ[8]: Անդրադառնալով Դվինի 1937–1939 թթ. պեղումների ընթացքում կենտրոնական թաղամասում հայտնաբերված սյունազարդ դահլիճով շինության ավերակներին, որոնք իրավացիորեն վերագրվեցին կաթողիկոսարանին, Կ. Ղաֆադարյանը գտնում է, որ պալատը կառուցվել է հայրապետական աթոռը Վաղարշապատից Դվին տեղափոխելու սկզբնական տարիներին, այն է՝ Գյուտ Արահեզացու կաթողիկոսության շրջանում, քանի որ «… Գյուտից հետո ոչ մի կաթողիկոս Դվինից դուրս չի հիշատակվել»[9]: Հիշյալ տեսակետը հետագայում առաջ է քաշել նաև անվանի հնագետ Ա. Քալանթարյանը, որը Դվինի՝ 1973–1980 թթ. պեղումների արդյունքներն ամփոփող աշխատության մեջ մի առանձին գլուխ է հատկացրել կաթողիկոսական պալատին, նշելով, որ այն V դարի կառույց է և անմիջական կապ ունի «… Գյուտ կաթողիկոսի օրոք հոգևոր կենտրոնը Վաղարշապատից Դվին տեղափոխելու հետ»[10]: Նույն կարծիքին է նաև հնագետ Ն. Հակոբյանը, որը ևս, անդրադառնալով Դվինի պեղումներով նորաբաց պալատական կառույցին (V դ.), գտնում է, որ այն « … հավանաբար, կառուցվել է Գյուտ կաթողիկոսի գահակալման ժամանակաշրջանում՝ 460–470-ական թվականներին, երբ Հայաստանի հոգևոր կենտրոնը Վաղարշապատից Դվին է փոխադրվել»[11]:

Մատենագիրներից Հովհաննես Դրասխանակերտցին, Թովմա Արծրունին, Վարդան վարդապետը, ինչպես նաև Սյունյաց մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանը կաթողիկոսարանի՝ Դվին տեղափոխումը կապում են Գյուտ Արահեզացու գահակալման ժամանակաշրջանի հետ, իսկ դեպքերի ժամանակակից Ղազար Փարպեցին Գյուտի կաթողիկոսության վերաբերյալ հաղորդում է. « Քանզի յետ կատարման սրբոյ կաթողիկոսին Յովսեփայ յաջորդեաց զկաթողիկոսութիւնն յաշխարհիս Հայոց տէր Մելիտէ, որ էր յազգէն Մանազկերտեցեացն. և զհետ նորա տէր Մովսէս, որ էր և նա ի նոյն ազգէ: Եւ ապա ըստ Աստուծոյ տեսչութեանն յաջորդեաց զկաթողի-

---

[8] *Տե՛ս Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն. Դվին քաղաքը և նրա պեղումները, I, Երևան, 1952, էջ 115:*

[9] *Նույն տեղում, էջ 116: Հայաստանի վաղմիջնադարյան պալատները նկարագրելիս Հովհ. Խալփախչյանն անդրադառնում է նաև Դվինի կաթողիկոսարանին: Թվագրման հարցում նա վկայակոչում է Կ. Ղաֆադարյանին, Վ. Հարությունյանին, Ն. Տոկարսկուն և, հետևելով վերջինիս, այն թվագրում է VII դարով՝ համարելով առավել արժանահավատ* (О. Х. Х а л п а х ч ь я н. Гражданское зодчество Армении (жилые и общественные здания). М., 1971, с. 93)*:*

[10] *Տե՛ս Կ. Գ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն, Ա. Ա. Ք ա լ ա ն թ ա ր յ ա ն. Դվին քաղաքը և նրա պեղումները (1973–1980 թթ.), II, Երևան, 2002, էջ 65: Դվինի կաթողիկոսարանի կառուցման ժամանակաշրջանը ճշտվել է նաև հնագիտական շերտագրմամբ: Այն կաթողիկոսարանի առաջին շենքն է, իսկ երկրորդն ըստ հնագետների՝ առաջինի՝ 572 թ. ապստամբության ժամանակ հրդեհվելուց ու ավերվելուց հետո «… VII դարի շինարարական գործունեության արդյունք է, ավարտվել է եկեղեցու վերակառուցման հետ մեկտեղ»(նույն տեղում, էջ 70): 1937–1939 թթ. Դվինի հնագիտական արշավախումբը ղեկավարող Ս. Տեր-Ավետիսյանը մինչև VII դ. 40-ական թվականները գոյատևող մարզպանական շրջանի հետ է կապում Դվինի ճարտարապետական որոշ հուշարձաններ, այդ թվում և «… Ս. Գրիգոր եկեղեցին՝ իրեն կից սյունազարդ դահլիճով՝ պեղված 1937 և 1938 թվականներին» (Ս. Վ. Տ ե ր - Ա վ ե տ ի ս յ ա ն.* Двин. Его история и раскопки в 1937–1939 гг., *Հայագիտական հետազոտություններ, Երևան, 2010, էջ 212–213):*

[11] Н. Г. А к о п я н. Раскопки центрального квартала, Двин IV. Город Двин и его раскопки (1981–1985 гг.). Ереван, 2008, с. 11.

կոսութիւն աշխարհիս Հայոց տէր Գիւտ, որ էր ի գաւառէն Տայոց, ի գեղջէն Արահեզայ... »[12]: Պատմիչներից շատերը (Հովհաննես Դրասխանակերտցի, Ստեփանոս Ասողիկ, Կիրակոս Գանձակեցի, Ստեփանոս Օրբելյան և այլք) Մելիտե ու Մովսես Մանազկերտցի կաթողիկոսներին չեն հիշատակում, ինչի հետևանքով աղավաղվում է Գյուտի կաթողիկոսության տարեթվերը: Այս խնդրին անդրադարձել է Հայր Բարսեղ Սարգիսյանը՝ Հովհաննես Մանդակունու կյանքն ու կաթողիկոսության շրջանը նկարագրելիս: Նա գրում է, որ վերոնշյալ պատմագիրները «…ընդունելով զՄանդակունին իբրև անմիջական հաջորդ Գյուտի, չեն ճանչնար զՄելետն և զՄովսես՝ իբրև նախորդ կաթողիկոսներ»[13]: Ստացվում է, որ Ղազար Փարպեցին նրանց «…իբր կաթողիկոսներ հիշել արժան համարած է, այսպես այլ մյուս պատմիչներն իբրև ոչ կաթողիկոս ի լռության դատապարտած են զանոնք»[14]: Հայր Սարգիսյանը վկայակոչում է երկու հին հիշատակարան, որոնք բովանդակում են հայոց հայրապետների ժամանակագրական ցանկը: Հետաքրքիրն այն է, որ այստեղ ևս վերոնշյալ կաթողիկոսները հիշատակված չեն, և մի տեղում Սահակ Պարթևին, մյուսում՝ Հովսեփ Հողոցմեցուն հաջորդում են Գյուտ և Հովհաննես Մանդակունի կաթողիկոսները: Ուշագրավը, սակայն, Գյուտ կաթողիկոսին վերաբերող տողերն են, որ մեջբերում է Հայր Սարգիսյանը. «Տէր Գիւտ ի Վանանդայ Ոթմուզ գեղջէ, յաշակերտութենէ սրբոյն Սահակայ՝ ամս Ժ. (10): Սա ընդ առաջինսն կացեալ՝ հաստատեաց զաթոռ հայրապետութեան ի Դւին, զկնի կատարման սրբոց Վարդանանցն»[15]: Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանի կարծիքով՝ հիշատակարանը վկայությունն է այն բանի, որ Վարդանանց նահատակությունից հետո «Գյուտն առաջինն է եղել, որ հայրապետական աթոռը հաստատել է Դվինում»[16]: Այսինքն, եթե նկատի ունենանք, որ Վարդանանց պատերազմից անմիջապես հետո գահակալել են Մելիտե և Մովսես կաթողիկոսները, ապա նրանց հաջորդ Գյուտ Արահեզացին հայրապետական աթոռը Դվին է փոխադրել պատերազմից փոքր-ինչ ուշ:

Հովհաննես Դրասխանակերտցու հաղորդմամբ՝ քրիստոնեությունն ուրացող հայ նախարարներից Շավասպ Արծրունին և դվնեցի Վնդոն Դվինում որմիզդական մեհյան ու կրակապաշտական տաճար են կառուցում: Վնդոն իր որդի Շերոյին քրմապետ է կարգում: Մեծն Սահակի թոռ Վարդանը, լսելով դեպքերի մասին, զորք է գումարում ու հարձակվում Դվինի վրա: Շավասպը սպանվում է, Մշկան մարզպանը փախուստի դիմում,

---

[12] *Ղազարայ Փարպեցւոյ պատմութիւն հայոց. Թուղթ առ Վահան Մամիկոնեան (այսուհետև՝ Ղազար Փարպեցի), քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանցի, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Բ. Ուլուբաբյանի, Երևան, 1982, էջ 264:*

[13] *Հ. Բ ա ր ս ե ղ վ. Մ ա ր գ ի ս յ ա ն. Քննադատություն Հովհան Մանդակունո և յուր երկասիրությանց վրա, Վենետիկ, 1895, էջ 12:*

[14] *Նույն տեղում:*

[15] *Նույն տեղում, էջ 13:*

[16] *Կ ա ր ա պ ե տ ե պ ի ս կ ո պ ո ս [Տ ե ր - Մ կ ր տ չ յ ա ն]. Հովհան Մանդակունի և Հովհան Մայրագոմեցի.– «Շողակաթ Ս. Էջմիածնի» հայագիտական ժողովածու, Վաղարշապատ, 1913, էջ 86: Աթոռի՝ Դվին փոխադրվելու մասին տե՛ս նույնի՝ Հայոց եկեղեցու պատմություն, մասն Ա, Ս. Էջմիածին, 2011, էջ 185–193:*

Վնդոյին ձերբակալելով այրում են իր իսկ շինած ատրուշանի վրա, իսկ նրա որդի Շերոյին կախաղան հանում մեհյանի փայտից: Սրանից հետո «…ի տեղի բագնին շինէ եկեղեցի մեծ անուանակոչութեամբ Սրբոյն Գրիգորի, անդ փոխելով զաթոռ հայրապետութեանն. և հաստատեալ կացուցանէ ի նմա զմեծ հայրապետն Գիւտ»[17]:

Վերոհիշյալ հայ նախարարների հավատուրացության և Դվինում կրակապաշտական մեհյանի կառուցման վերաբերյալ վկայություններ ունի նաև Վարդան վարդապետը: Անդրադառնալով հիշյալ դեպքերին ու Վարդան զորավարի՝ դավաճաններին իրենց արժանի հակահարվածը տալուն, պատմագիրը հավելում է, որ դրանից հետո «...զսուրբն Յովսէփ ձեռնադրեն կաթողիկոս, որ արար զժողովն ի Շահապիվանա, ուր զտուգանաց կանոնն կարգեցին... Վասն որոյ ի մի վայր եկեալ իշխանքն Հայոց, դնեն զԳիւտ պատրիարք, և ի Դուին փոխեն զաթոռն, հրամանաւ նորին Յովսեփայ. յորմէ մանաւանդ հնազանդեցան սրբոյն Վարդանայ ամենայն նախարարքն Հայոց...»[18]:

Թովմա Արծրունին դեպքերը փոքր-ինչ այլ կերպ է ներկայացնում: Նա Վնդոյին ընդունում է իբրև պարսիկ մարզպան ու մոգպետ, որի աջակցությամբ էլ Շավասպը եկեղեցին վերածում է հեթանոսական մեհյանի: Վարդան Մամիկոնյանի գլխավորած զորքի հարձակումը հեթանոսների բանակի վրա և վերջիններիս ջախջախումը շրջադարձային նշանակություն է ունենում, քանզի դրանից հետո «…քանդեն աւերեն զմեհեանն և յատակեալ զտեղին՝ շինեն նորին քարամբք զմեծ եկեղեցին զսուրբ Գրիգորն ի Բլուր տեղւոջն, և փոխեն անդ զկաթողիկոսն Հայոց զԳիւտ… »[19]:

Ս. Էջմիածնին նվիրված «Ողբ»-ի ԺԱ գլխում Ստ. Օրբելյանը ողբում է տաճարի անշուք ու ամայի վիճակը, իսկ կաթողիկոսարանի տեղափոխումը վերագրում Հովսեփ Հողոցմեցու հաջորդ Գյուտ Արահեզացուն՝ անտեսելով վերջինիս նախորդած Մելիտե և Մովսես Մանազկերտցիներին.

Ո՞ւր են փեսայքն և փառք նոցին,
Պատրիարքունք Հայոց ազգին,
Որք մինչ Յովսէփ Հողոցմեցին
Յիմ սենեկիս հանգչեալ կային,
Ապա ի Դվին չուեալ գնացին
Բանիւ սրբոյ զօրապետին՝
Վարդանայ Մամիկոնին՝
Սպարապետին Հայոց սպային:
ԶԳիւտ ընտրեցին զերանելին
Ի Սուրբ Գրիգորն նստուցին…[20]

---

[17] *Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն հայոց, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Գ. Բ. Թոսունյանի, Երևան, 1996, էջ 62:*

[18] *Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի, Վենետիկ, 1862, էջ 53:*

[19] *Թովմա Արծրունի եւ Անանուն. Պատմութիւն տանն Արծրունեաց, քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Մ. Հ. Դարբինյան-Մելիքյանի, Երևան, 2006, էջ 90:*

[20] *Ստեփաննոս Օրպէլեանի Ողբ ի Ս. Կաթուղիկէն, հրատարակեց Կարապետ Կոստանեանց, Թիֆլիս, 1885, էջ 35:*

Աթոռի տեղափոխումը Ստ. Օրբելյանը ևս կապում է Վարդանանց պատերազմի հետ, ըստ որի՝ 452 թ. Հովսեփ Հողոցմեցուն արդեն Դվինի Ս. Գրիգոր եկեղեցում հաջորդում է Գյուտ կաթողիկոսը:

Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը կասկածելի է համարում վերոհիշյալ պատմագիրների տեղեկությունները, կարծելով թե « Հովհան և Թովմաս ժամանակակիցներ լինելով, երկուքն ալ ուղղակի բերանացի զրույցե առած են իրենց գրածը, քանի որ Եղիշե ու Փարպեցի այդպիսի հիշատակություն չունին»[21]: Ըստ այդմ էլ նա հավաստիացնում է, որ « …հայրապետանոցին պաշտոնական տեղափոխությունը և Դվինի մեջ հաստատվելը պետք է դնել 485-ին»[22]: Մ. Օրմանյանը գտնում է, որ Վահան Մամիկոնյանի փոխարեն հանդես է գալիս Վարդան զորավարը, որովհետև « Վարդան ու Գյուտ երբեք գործակից չեն կրնար ենթադրվիլ, Պերոզի օրով Վարդան այլևս չկար»[23]: Ըստ նրա՝ « …շատ անգամ անունի շփոթությունն է, որ եղելությունը կխանգարե, և անունը ուղղելով գործը իր կարգին կմտնե: Ըստ այսմ, եթե այստեղ ալ Վարդանի տեղ… նրա եղբորորդին Վահանը առնենք, իրողությունը շատ դյուրավ իր տեղը կգտնե»[24]: Մ. Օրմանյանը նշում է նաև, որ Գյուտ կաթողիկոսի հաջորդ Հովհաննես Մանդակունին « …ամեն անգամ, որ հոգևորական գործողություն կար անելիք Էջմիածին կգար, ուր էր իր կեդրոնը և սուրբ կաթողիկեն, և Դվին կերթար միայն քաղաքական գործերու համար» և միայն Վահան Մամիկոնյանի մարզպանության ընտրության ժամանակ « …ամեն բան Դվինի կաթողիկեին մեջ կկատարե, և Վաղարշապատ գալու պետք չի տեսներ, հակառակ որ Վաղարշապատի կաթողիկեն նորոգություններ ստացած էր»[25]: Ենթադրելի է, որ Մ. Օրմանյանը նման հետևության է հանգել, քանի որ Ղազար Փարպեցին Հովհաննես Մանդակունուն մի քանի անգամ հիշատակում է Դվինում, չնայած, որ կաթողիկոսը երբեմն ս. Էջմիածնի Մայր տաճարում էլ էր պատարագ մատուցում, որն ըստ Կ. Ղաֆադարյանի՝ արվում էր այն պարզ պատճառով, որ « …Էջմիածինը քրիստոնեության հիմնադիր Գրիգոր Պահլավունու անվան հետ էր կապված»[26]: Ուշագրավ է Փարպեցու հիշատակած այն դրվագը, երբ Դվին ուղևորվելիս Վահան Մամիկոնյանը կանգ է առնում Վաղարշապատ քաղաքում « …և կատարեալ զուխտ պատարագաց ի Վաղարշապատ քաղաքին, հանդերձ ընդ իւր ուխտապահ նախարարօքն և այլ զօրօքն Հայոց, ի տանն Աստուծոյ և ի վկայարանս նահատակեալ կուսանացն… Եւ չուեալք անտի երթեալք հանգչէին ի բնական ոստանին Հայոց ի Դունի…»[27]:

---

[21] *Մաղաքիա արք. Օրմանյան. Ազգապատում, հ. Ա, Ս. Էջմիածին, 2001, էջ 498:*

[22] *Նույն տեղում, էջ 551: Աստվածաբան Ա. Չանթիկյանը ևս, հետևելով Օրմանյանին, հայրապետական աթոռի տեղափոխությունը թվագրում է 485 թվականով (տե՛ս Ա. Չանթիկյան. Հովհան Մանդակունի.– «Էջմիածին», 2011, Ե, էջ 46):*

[23] *Մ. Օրմանյան. նշվ. աշխ., էջ 498:*

[24] *Նույն տեղում, էջ 498–499:*

[25] *Նույն տեղում, էջ 550–551, «Քրիստոնյա Հայաստան»հանրագիտարան, էջ 613:*

[26] *Տե՛ս Կ. Ղաֆադարյան. Դվին քաղաքը և նրա պեղումները, I, էջ 117:*

[27] *Ղազար Փարպեցի, էջ 342:*

Ղազար Փարպեցու հաղորդմամբ՝ Դվին վերադառնալիս Վահան Մամիկոնյանին ընդառաջ է գնում Հովհաննես Մանդակունին՝ հանդես գալով ողջույնի ճառով. «Եւ եկեալ զօրաւարն Հայոց տէրն Մամիկոնենից Վահան յաշխարհս Հայոց, ամենայն ուխտապահ նախարարօքն Հայոց. որում ընդառաջ ելանէր սուրբ այրն Աստուծոյ կաթողիկոսն Հայոց Յոհան, պատուական նշանաւ խաչին և սուրբ նշխարօք ճգնազգեաց նահատակին Գրիգորի, որովք և յուղարկեացն իսկ ի դուռն զամենեսեան»[28]: Վահանին մարզպան (մոտ 487–505 թթ.) օծելու ծեսը դարձյալ Հովհաննես Մանդակունին կատարում է Դվինում. «Վաղվաղակի հրամայէր թագաւորն Վաղարշ, միաբանութեամբ ամենայն աւագանւոյ դրանն և Արեաց՝ հրովարտակ առնել ի Հայս, և զտէրն Մամիկոնենից և զզօրավարն Հայոց Վահան՝ մարզպան ի վերայ աշխարհին Հայոց կարգել»[29]:

Հակադրվելով Մ. Օրմանյանի տեսակետին՝ Կարապետ եպիսկոպոսն ավելի քան համոզված է, որ հոգևոր գործերի համար Հովհաննես Մանդակունին բնավ էլ էջմիածին չի եկել, «այլ Դվինն է Փարպեցու պատմության մեջ նրա մշտական կայանը…»[30]: Ըստ նրա՝ լիովին թյուրիմացություն է Վահան Մամիկոնյանին վերագրել Դվինի կաթողիկեի կառուցումն ու կաթողիկոսարանի փոխադրումը, քանզի անհնար էր, որ «…այդպիսի մի կարևոր դեպք չհիշեր Փարպեցին, որի պատմությունը ջատագովություն է Վահանի սխրագործությանց և որ նրա մյուս շինություններն ու նորոգությունները գովությամբ հիշել է»[31]: Եվ, հիրավի, 481–484 թթ. պարսից Պերոզ արքայի դեմ ծավալված ապստամբություններից հետո Հայաստանի մարզպան Վահան Մամիկոնյանի կողմից Վաղարշապատի ու Դվինի կաթողիկեները հիմնովին վերանորոգելու, այլ ոչ թե կառուցելու մասին վկայություն ունի նաև Սեբեոսը. «Այս Վահան ժողովեաց և զհարկս աշխարհիս Հայոց և շինեաց զեկեղեցիս մեծամեծս, զոր աւերեալ էր Պարսից ի Վաղարշապատ քաղաքի և ի Դբունի և ի Մզրայս և ի բազում տեղիս աշխարհիս Հայոց: Եւ շինեալ զերկիրս նորոգեաց վերստին»[32]:

Ն. Ակինյանն ու Պ. Տեր-Պողոսյանը «Մատենագրական հետազոտություններ» հոդվածաշարով անդրադառնում են նաև Գյուտ ու Հովհաննես Մանդակունի կաթողիկոսների գործունեությանը՝ աթոռի տեղափոխման հարցում վկայակոչելով Կարապետ եպիսկոպոսի հետևյալ տողերը. «Հատկապես թե աթոռի տեղափոխությունը տեղի է ունեցել Գյուտի կաթողիկոսության օրով, այնքան միաբան են այդ նկատմամբ մեր պատմիչների և ձեռագիր հիշատակարանների վկայությունները, կամ թե Մանդակունու աթոռանիստը Դվինն է եղել սկզբից ևեթ, այնքան է պարզ Փարպեցու պատմությունից, որ զարմանալ միայն կարելի է, երբ մի նոր ապարդյուն աշխատություն է գործ դրվում այդ տեղափոխությունը Մանդակունու օրով

---

[28] *Նույն տեղում, էջ 426:*

[29] *Նույն տեղում, էջ 432:*

[30] *Կ ա ր ա պ ե տ ե պ ի ս կ ո պ ո ս. նշվ. աշխ., էջ 87:*

[31] *Նույն տեղում, էջ 86:*

[32] *Պատմութիւն Սեբէոսի, աշխատասիրությամբ Գ. Վ. Աբգարյանի, Երևան, 1979, էջ 66–67:*

կատարված ցույց տալու»[33]*: Կարապետ եպիսկոպոսի առարկությունն ուղղված էր հիմնականում Մ. Օրմանյանի տեսակետի դեմ, որը « ...կջանա ժխտել Գյուտի դերը և վերագրել այն Հովհան Մանդակունի կաթողիկոսի շրջանին 485-ին... «*[34]*:*

Կ. Ղաֆադարյանն իրավամբ նկատում է, որ Հովհաննես Մանդակունու օրոք Ս. Էջմիածնի վանքի վանահայրը Ղազար Փարպեցին էր, մի ապացույց, որ « …այնտեղից արդեն կաթողիկոսը հեռացել էր, որովհետև կաթողիկոսական վանքը վանահայր չի ունենում»[35]*: Այս հանգամանքը փաստվում է նաև Փարպեցու հայտնի «Թղթով», որում նշվում է. «Կամեցեալ մեծի իմաստութեանն Վահանայ մարզպանին, զօրավարին Հայոց տեառն Մամիկոնէից, զնա իւր առաւել մերձաւոր և սիրելի առնել՝ շնորհէր նմա զհոյակապ և զկանաւոր տեղին ի Նոր քաղաքի, որում անունն էր սուրբ Կաթողիկէ եկեղեցի, վանօքն. և նորա ընկալեալ զբանն մարզպանին՝ խնամածէր զտեղին»*[36]*: Ն. Ակինյանն ու Պ. Տեր-Պողոսյանը գտնում են, որ Փարպեցին սիրով է ստանձնել Կաթողիկեի հոգաբարձությունը, իսկ ժամանակի առումով կարծում են, թե Վահանը « …Վաղարշապատի կաթողիկեն հիմնովին նորոգելե հետո Ղազարը կհրավիրե ստանձնել եկեղեցվոյն և մերձավոր վանքին հոգաբարձությունը՝ 487-ին»*[37]*:*

Կաթողիկոսարանի տեղափոխման վերաբերյալ տեղեկություններ են պահպանվել նաև ձեռագրերում: Դրանցից մեկը Մաշտոցյան Մատենադարանի № 6983 ձեռագիրն է՝ գրված XVIII դարում՝ Հակոբ սարկավագի կողմից: Այն բովանդակում է «Հարցմունք Յոբնաղի եւ պատասխանիք Մովսիսի եւ Դաւթի» աշխատությունը, որում խոսվում է նաև Գյուտ կաթողիկոսի գահակալման ու աթոռի տեղափոխման մասին. «Եւ էր ի ժամանակին յայնմիկ կաթողիկոս Հայոց Տէր Գիւտ աշակերտակից Մովսէսի (արդ՝ ոչ զբովանդակ զվարսն պատմեմք, այլ թողլով զվարս ճգնութիւն նոցա). զհարկաւորսն զեկուցանեմք եւ արարին խնդիր Մովսէսի ընդ ամենայն աշխարհն Հայոց եւ ոչ գտին զնա եւ կաթողիկոսն, եւ եպիսկոպոսունքն, եւ իշխանքն առհասարակ ունէին սուգ ոչ սակաւ վասն ոչ գտանելոյ զնա: Իսկ հայրն Գիւտ ելեալ հաստատէր զկարգս եկեղեցւոյ յաշխարհեն Հայոց եւ հաստատեաց զաթոռ իւր ի Դւին քաղաքին*...»*[38] *(ընդգծումը մերն է –* Ա. Հ.*):*

---

[33] *Հ. Ն. Ակինյան, Հ. Պ. Տեր-Պողոսյան. Մատենագրական հետազոտություններ. Գյուտ կաթողիկոս.– «Հանդես ամսօրյա», 1971, թիվ 1–3, էջ 15–16: Տե՛ս նաև* Կարապետ *եպիսկոպոս. նշվ. աշխ., էջ 85–86: Հ. Ս. Կոգյանը ևս հայրապետական աթոռի փոխադրումը Դվին կապում է Գյուտ Արահեզացու գահակալման ժամանակաշրջանի հետ (տե՛ս Հ. Ս. Կոգյան. Հայոց եկեղեցին, Բեյրութ, 1961, էջ 160):*

[34] *Հ. Ն. Ակինյան, Հ. Պ. Տեր-Պողոսյան. նշվ. աշխ., էջ 15–16:*

[35] *Կ. Ղաֆադարյան. Դվին քաղաքը և նրա պեղումները, I, էջ 117: Նման պարագայում վանքն ունենում է լուսարարապետ:*

[36] *Ղազար Փարպեցի, էջ 446:*

[37] *Հ. Ն. Ակինյան, Հ. Պ. Տեր-Պողոսյան. Մատենագրական հետազոտություններ. Ղազար Փարպեցի.– «Հանդես ամսօրյա», 1972, թիվ 4–6, էջ 143–144:*

[38] *Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 6983, էջ 47բ: Ձեռագիրը թվագրվում է XVIII (ԺԸ) դարով, սակայն պահպանակի (էջ Աա) ստորին մասում Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը նշում է թողել, ըստ որի՝ ձեռագիրը թվագրել է XIX (ԺԹ) դարով: Հիշյալ ձեռագրին անդրադարձել է նաև Կ. Ղաֆադարյանը, որը, հավանաբար, հիմք ընդունելով ստեղծագործության տիտղոսաթերթի հեղինակային հիշատակարանը, ձեռագիրը թվագրել*

Խնդրո առարկայի վերաբերյալ կարծիքները տարաբնույթ են նաև ներքոհիշյալ աշխատություններում: Ըստ ականավոր լեզվաբան Հր. Աճառյանի՝ Գյուտ կաթողիկոսը, որը «Տայոց Արահեզայ գյուղից էր, աշակերտ Ղևոնդյանց, ապա եպիսկոպոս Մամիկոնյանց: Հաջորդեց Մովսեսի և աթոռը դրավ Դվին»[39]:

Ակադեմիկոս Վ. Հարությունյանը, անդրադառնալով Դվինի կաթողիկեից հյուսիս - արևելք՝ 1937 թ. ձեռնարկած պեղումներին, իբրև Հայաստանի աշխարհիկ ճարտարապետության ինքնատիպ հուշարձան, առանձնացնում է պատրիարքական ապարանքի կամ կաթողիկոսարանի մնացորդները, որոնք աչքի են ընկնում իրենց հատակագծով և ճարտարապետական լուծումներով: Պատմագիրների վկայությունների հիմամբ՝ նա գտնում է, որ կաթողիկոսարանը Գյուտ Արահեզացին է 470 կամ 471 թթ. Վաղարշապատից Դվին փոխադրել, ինչից ենթադրում է, որ «...Պատրիարքական ապարանքի կառուցումը կամ կապված է այդ իրադարձության հետ, կամ կենսագործված է փոքր-ինչ հետո»[40]:

Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանի սաներից Հովսեփ Գրիգորյանը, անդրադառնալով Հայաստանի մարզպանական ժամանակաշրջանին, գրում է. «Այս շրջանում Պարսկաստանը վերացնում է հայկական թագավորությունը, և երկիրն սկսում են կառավարել մարզպանները, որոնք նստում էին Դվինում: Նման պարագայում հայ կաթողիկոսները ստիպված են լինում 484 թ. հայրապետական գահը Վաղարշապատից փոխադրել Դվին»[41]:

Բանագետ Ս. Վարդանյանը, ներկայացնելով Դվին մայրաքաղաքի պատմությունը, գրում է. «Արշակունիների անկումից (428 թ.) հետո Դվինը մարզպանական Հայաստանի կենտրոնն էր: Երբ Գյուտ կաթողիկոսը (461–478) կաթողիկոսարանը Վաղարշապատից տեղափոխեց Դվին, այն դարձավ Հայաստանի նաև հոգևոր կենտրոնը»[42]:

Խնդրի վերաբերյալ տեղեկությունները հակասական են նաև հանրագիտարաններում: «Հայկական սովետական հանրագիտարանում» նշվում է, որ աթոռի՝ Վաղարշապատից տեղափոխումը նախևառաջ պայմանավորված էր հայերի նկատմամբ պարսիկների ու բյուզանդացիների դավանափոխական նկրտումներով, ինչը հանգեցրել էր նրան, որ դեռևս Գյուտ Արահեզացի կաթողիկոսի ժամանակներից հայ նախարարները հորդորում էին հայրապետին, աթոռը Վաղարշապատից Դվին փոխադրել[43]: «Քրիստոնյա Հայաստան»-ում հայրապետական աթոռի՝ Դվինում գտնվելու տարիները սահմանվում են 484–931 թթ., այսինքն՝ աթոռը տեղափոխվել է

է VIII–X դդ. (տե՛ս Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն. Դվին քաղաքը և նրա պեղումները, I, էջ 115, նաև՝ Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Բ, կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաբյան, Երևան, 1970, էջ 434):

[39] *Հ ր. Ա ճ ա ռ յ ա ն. Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Երևան, 1942, էջ 475:*

[40] *Տե՛ս Վ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Դվինի V–VII դդ. ճարտարապետական հուշարձանները (ըստ 1937–1939 թթ. պեղումների նյութերի), Երևան, 1950, էջ 56–57:*

[41] *Տե՛ս Հ. Գ ր ի գ ո ր յ ա ն. Համազգային նախամեծար Մայր Աթոռ Ս. Էջմիածնի.– □Էջմիածին□, 1944, VI, էջ 24–29:*

[42] *Տե՛ս Ս. Վ ա ր դ ա ն յ ա ն. Հայաստանի մայրաքաղաքները, Երևան, 1995, էջ 111:*

[43] *Հայկական սովետական հանրագիտարան, հ. 3, Երևան, 1977, էջ 444:*

Հովհաննես Մանդակունու օրոք[44]: Վերոնշյալ վիճահարույց մոտեցումներն առկա են նաև Ս. Էջմիածնում հրատարակված « Ամենայն Հայոց կաթողիկոսներ» հանրագիտարանում, որտեղ հայրապետական աթոռի տեղափոխումը վերագրված է և՛ Գյուտ Արահեզացի, և՛ Հովհաննես Մանդակունի կաթողիկոսների գահակալման ժամանակաշրջաններին: Գրքում կարդում ենք, որ Գյուտ Արահեզացու օրոք՝ 476 թ., կաթողիկոսական նստավայր է դառնում Դվինը, իսկ Հովհաննես Մանդակունու գործունեությունը նկարագրելիս նշվում է, որ « 485-ին Հայոց մարզպանի պաշտոնում Վահան Մամիկոնյանի ճանաչման առթիվ Հովհաննես Ա Մանդակունին հայրապետական աթոռը տեղափոխել է Դվին, որի նորահիմն Ս. Կաթողիկե եկեղեցում մեծ հանդիսավորությամբ նշել է այդ տոնական իրադարձությունը, արտասանել իր ատենաբանությունը»[45]:

Ամփոփելով վերն ասվածը՝ առավել հավանական ու ստույգ ենք համարում մատենագրական սկզբնաղբյուրների ու Դվինի հնագիտական պեղումների հիմամբ ձևավորված կարծիքները: Արդեն նշեցինք, որ դեպքերի ժամանակակից Ղազար Փարպեցին ոչինչ չի հաղորդում Վահան Մամիկոնյանի օրոք Դվինի կաթողիկեի կառուցման ու կաթողիկոսարանի փոխադրման վերաբերյալ: Դեռ ավելին, Փարպեցու « Թուղթ առ Վահան Մամիկոնեան» գրության մեջ հստակ նշվում է, որ Վահան Մամիկոնյանն է Փարպեցուն կարգել Նոր Քաղաքի կամ Վաղարշապատի կաթողիկեի հոգաբարձու: Այսինքն, եթե Վահանը Հովհաննես Մանդակունու օրոք՝ մոտ 480-ական թվականների կեսերին Ղազար Փարպեցուն նշանակել է Մայր տաճարի հոգաբարձու կամ վանահայր, ուրեմն հայրապետական աթոռն արդեն իսկ տեղափոխված է եղել Դվին, քանզի կաթողիկոսական վանքում վանահայր չէին կարգի: Փաստորեն, Դվինի՝ 481 թ. մայրաքաղաք հռչակվելուց առաջ կաթողիկոսարանը Վաղարշապատից արդեն տեղափոխված է եղել, ըստ այդմ էլ մեզ համոզիչ է թվում, որ քրիստոնեության ընդունումից հետո Վաղարշապատում հաստատված հայրապետական աթոռը, ամենայն հավանականությամբ, Դվին է փոխադրվել Գյուտ Ա Արահեզացի կաթողիկոսի գահակալման սկզբնական ժամանակաշրջանում, այն է՝ 460–470-ական թվականների միջակայքում:

О ПЕРЕНЕСЕНИИ ПАТРИАРШЕГО ПРЕСТОЛА ИЗ ВАГАРШАПАТА В ДВИН

АРСЕН АРУТЮНЯН

Резюме

После принятия христианства Григорием Просветителем (301 г.) в Вагаршапате утвердился патриарший престол. После падения царства Аршакидов (428 г.) Восточная Армения попадает под влияние Сасанидской Персии. В это

[44] *«Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, էջ 461, 613:*
[45] *Ամենայն Հայոց կաթողիկոսներ. հանրագիտարան, էջ 46, 126:*

время город Двин являлся одним из крупнейших административно-хозяйственных, культурных центров Востока, поэтому сюда из Вагаршапата был перенесен патриарший престол. После этого в 481 г. Двин стал столицей марзпанской Армении. О периоде перенесения престола в арменоведении существуют противоречивые мнения. Исследователи полагают, что это связано со временем католикосов Мелите I Маназкертци (М. Чамчянц, У. Тер-Мовсисян), Гюта I Арагезаци (Оганес Драсханакертци, Товма Арцруни, Степанос Орбелян, Н. Акинян, К. Кафадарян, В. Арутюнян, А. Калантарян и др.), Оганеса I Мандакуни (М. Орманян, И. Григорян). Подробные исследования о событиях этого периода (летописи, рукописи, результаты археологических раскопок) позволяют нам предположить, что патриарший престол был перенесен из Вагаршапата в Двин, по всей вероятности, во времена католикоса Гюта Арагезаци, в 460—470 годах.

ABOUT TRANSFER OF THE PATRIARCHAL THRONE TO DVIN FROM VAGHARSHAPAT

ARSEN HARUTYUNYAN

S u m m a r y

After the adoption of Christianity (301), the patriarchal throne was established in Vagharshapat by St. Gregory the Illuminator. After the fall of the Arsacids' kingdom in 428 A.D., Dvin was the capital of Armenia’s governor (marzpan) (since 481 A.D.). The patriarchal throne was transferred to Dvin from Vagharshapat, because the role of Dvin in the political and cultural life of the country became even more important. There are many contradictory opinions about the period of transfer of patriarchal throne. According to historiographers and researchers, patriarchal throne was transferred from Vagharshapat during enthronement of catholicoses Melite A Manazkerttsi (M. Chamchyants, H. Ter-Movsisyan), Gyut A Arahezatsi (Hovhannes Draskhanakerttsi, Tovma Artsruni, Stepanos Orbelyan, N. Akinyan, K. Ghafadaryan, V. Harutyunyan, A. Kalantaryan and others), Hovhannes A Mandakuni (M. Ormanyan, H. Grigoryan). As a result of thorough investigations (chronicles, manuscripts, results of archaeological excavations) it was found out that patriarchal throne was transferred to Dvin from Vagharshapat during enthronement of Catholicos Gyut Arahezatsi, approximately in 460–470 A.D.